ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻՆ
ԵՎ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Ռ.Ա. Միրումյան
փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գրիչ օրենքս ո՛չ ընդդեմ են բնական իմաստութեան,
ապա եթէ միաբանութիւն է, դաստիարակ եղեն
մեզ առաքի իմաստասէրքն, զի նոցա տես
քննութեամբն յորոց ճշմարիտքն ասացան:
Եվ մեր հոգեւոր հարանցն առաքնոցն ընկալեալ
ի նոցանէ զտրամագիր ասացեալսն:

Անանիա Շիրակացի

Նորությունը պաշտամունքի վերածած արդի ժամանակաշրջանում տարիմաստ է թվում ազգի պատմական անցյալին, այդ թվում նաև նրա գիտափիլիսոփայական մտքի պատմությանը դիմելը: Սակայն, իր «ներքին կարգով» ազգի հոգևոր մշակույթի, իսկ դրա սահմաններում նաև գիտափիլիսոփայական մտքի պատմությունը, ըստ էության, ժամանակի մեջ աշխարհի և մարդու մասին նույն ազգի կողմից նախկինում ստեղծված պատկերացումների ծավալումն է: Այդ իսկ պատճառով Արդիականության մարտահրավերների համարժեք պատասխանները նախ և առաջ որոնելի են ազգի պատմամշակութային ժառանգության մեջ[1]: Վերջինս նպաստում է նաև ազգի հոգևոր մշակույթի կենսունակությանը, իսկ այդ հենքի վրա՝ ազգի պատմական հեռանկարի սահմանմանը: Ազգի պատմական անցյալը նրա՝ իբրև կուռ ընդհանրության, կարևորագույն հիմքն է:

Յուրաքանչյուր ազգի մշակույթի հիմքում ընկած են նույն ազգի կողմից պատմականորեն ձևավորված կենսական կողմնորոշիչները, աշխարհազգայողության տարատեսակը, որոնք ազգի պատմական գոյության ամեն մի փուլում արտացոլում են նույն ազգի ինքնագիտակցության մակարդակը: Մշակույթն ապահովում է ազգի միասնության համար անհրաժեշտ հոգևոր կապը, որը ծնունդ է տալիս ժողովրդի պատմական հիշողությանը և պահպանում այն: Ազգի մշակութային արժեհամակարգը համահարաբերական է այդ մշակույթի կրողների ողջ հոգևոր կարգին: Դրանով է բացատրելի այն հանգամանքը, որ

հենց այդ արժեքները ստեղծած ժողովրդի պատմական հիշողությունը որոշակի իմաստ է հաղորդում այդ արժեքներին և ներգրում դրանք մարդկության հոգևոր ժառանգության պահոցի մեջ[2]:

Ազգի հոգևոր մշակույթի (ժողովրդական բանահյուսությունից մինչև փիլիսոփայություն և գիտություն) ձևավորումը համահարաբերական է ազգի պատմական գիտակցության առաջացմանն ու զարգացմանը: Համապատասխանաբար, ազգի հոգևոր մշակույթի և անցած նրա առանձին ոլորտների՝ փիլիսոփայության և գիտության) ձևավորման շարժընթացքի հետազոտումը հնարավորություն է ընձեռում բացահայտել ազգի ներքին, հոգևոր կյանքի աստիճանական ծավալման սահմանները, դրանով իսկ նաև ազգի պատմական գիտակցության հիմքն ու միտվածությունը: Լինելով ազգային մշակույթի աշխարհայացքային բնութագրումը՝ յուրաքանչյուր ազգի պատմական գիտակցությունը (պատմափիլիսոփայությունը) նույն ազգի ինքնաճանաչման, այն է՝ սեփական ստեղծագործական, հոգևոր ներունակության գիտակցման արտահայտությունն է: Ազգի պատմափիլիսոփայությունը բովանդակում է ազգային մշակույթի ներքին խորհուրդը՝ ազգի գոյության բացարձակ (իդեալական) իմաստի, հետևապես՝ նաև նրա պատմական հեռանկարի սահմանումը: Այս տեսանկյունից հետաքրքրական է հայոց գիտափիլիսոփայական մտքի ձևավորման ժամանակաշրջանը (V-VII դդ.), որի սահմաններում տեղի է ունեցել Հայաստանում հեթանոսական աշխարհայեցողության «հաղթահարումը» և քրիստոնեական գաղափարաբանության առաջացումն ու ամրապնդումը: Նորաստեղծ հայ տեսական միտքը կոչված էր վերաիմաստավորել բազմադարյան հայ հոգևոր մշակույթի ավանդույթները քրիստոնեական աշխարհընթռնման համատեքստում, դրանով իսկ նպաստել ազգային գիտափիլիսոփայական մտքի զարգացման շարժընթացին: Այս շարժընթացի մեջ առանձնակի դերակատարություն է ունեցել VII դ. հայ մտածող Անանիա Շիրակացին, որի գիտափիլիսոփայական համակարգում «համատեղվել» են անտիկ և ազգային գիտափիլիսոփայական մտքի արդյունքները՝ ներգրվելով քրիստոնեական աշխարհընթռնման մեջ:

Անտիկ և հայ ազգային-մշակութային ավանդույթների համադրման Անանիա Շիրակացու կատարած վիթխարի փորձը, ըստ էության, շարունակությունն էր այն միտման, որը իրականացվել էր V դ. առաջին կեսին հայ հայրաբանների (Մեսրոպ Մաշտոց, Եզնիկ Կողբացի, Եղի-

շե), իսկ V դ. երկրորդ կեսին - VI դարում հունաբան դպրոցի (Եղիշե, Դավիթ Անհաղթ) կողմից: Հայրաբանները քրիստոնեական վարդապետության բանական հիմնավորման նպատակով դիմում էին նաև անտիկ գիտափիլիսոփայական ավանդույթներին, բնության երևույթների դիտարկմանն ու զգայական փորձի անտիկ շրջանում ձեռք բերած արդյունքներին: Հունաբանները, իրենց հերթին, անտիկ փիլիսոփայությունից շարժվում էին դեպի միաստվածության գաղափարը:

Հայ հայրաբանների և հունաբանների արդյունքների համադրումը իրականացրեց Անանիա Շիրակացին, «յուրովի վերաիմաստավորելով և արժեվորելով անտիկ և ազգային գիտության և փիլիսոփայության նվաճումները»[3]: Բնավ պատահական չի թվում այն հանգամանքը, որ հայ փիլիսոփայության պատմության մեջ Անանիա Շիրակացին «գրանցվել» է նախ որպես բնագիտական ուղղության հիմնադիր: Անանիա Շիրակացու «բնաբանական ուսմունքը» գիտափիլիսոփայական մտքի զարգացման նախորդ փուլերի վերաիմաստավորման ու արժևորման արդյունք է:

Այս ճանապարհին Շիրակացու կատարած առաջին քայլը հեթանոսական որոշ ուսմունքների ու քրիստոնեական աշխարհընթերցման միջև կապ հաստատելն էր: Նրա ընթերցմամբ անտիկ շրջանում ձեռք բերված գիտելիքը հնարավոր է ներգրել քրիստոնեական տեսական մտքի մեջ, քանզի Ս.Գրքի օրենքները չեն հակասում բնական (հեթանոսական) իմաստությանը: Այս տեսակետից է արժևորելի մտածողի այն միտքը, թե հայերի առաջին հոգևոր հայրերը «վերցրին նրանցից (հեթանոսական շրջանի իմաստասերներից .-Ռ.Մ) ճշմարտության խոսքերը, որպեսզի երկու կողմերով՝ [իմաստության] արմատով և ծայրերով, պահեն մեզ աստվածային հավատքի մեջ, որպեսզի մենք հագենանք (ծառի) ծայրերի պտուղներով և հաստատուն արմատի շնորհիվ միշտ ծաղկենք և պտղաբերենք գիտության մեջ»: Այսպիսով՝ Շիրակացին հաստատում է մարդկային գիտելիքի ժառանգորդման սկզբունքը, որի շնորհիվ հին հունական գիտական գիտելիքը վերածվում է հայ ազգի ինքնընթերցման և աշխարհի ճանաչման կռվանի: Անանիայի բնափիլիսոփայական աշխարհայացքի մեջ ուրվագծվում է պատմության մեջ ազգի «ինքնորոշման» միտումը: Վերջինս նկատելի է նաև միջնադարյան հայ բնագիտական մտքի մի շարք ներկայացուցիչների աշխարհայեցողության մեջ (Գրիգոր Մագիստրոս, X-XI-դդ., Հովհաննես Սարկավագ Իմաստասեր, XI-XII-դդ., Հովհաննես Երզն-

կացի Պլուզ, XIII-դ., Հովնան Որոտնեցի, XIV-դ., Գրիգոր Տաթևացի, XIV-XV-դդ.:

Նրանց համոզմամբ, անտիկ շրջանի գիտության և փիլիսոփայության նվաճումները աշխարհիմացության անհրաժեշտ մի փուլ էր, որը նախապատրաստում էր քրիստոնեական հավատքի համարժեք ընկալումը և քրիստոնեական վարդապետության մշակումը: Այս տեսակետից ընթռնելի է այն փաստը, որ Աստծո գոյության տիեզերաբանական ապացուցման Արիստոտելի տեսությունը «գրավիչ» էր այն հայ աստվածաբանների համար, որոնք հակված էին աշխարհի բնագիտական ճանաչողությանը: Բացի այս, աշխարհի ճանաչողությունը դառնում է անհրաժեշտ, քանզի դա Աստծուն ճանաչելու, այն է՝ նրա գոյությունը ընդունելու, միակ միջոցն է: Իսկ քանի որ արարված տիեզերքը ունի հարաբերականորեն ինքնության գոյություն, ապա հարաբերականորեն ինքնուրույնություն պետք է ձեռք բերի նաև՝ տիեզերքի (բնության) մասին գիտությունը:

Ըստ Շիրակացու, Աստծո էության իմացության առումով մարդու ճանաչող բանականությունը սահմանափակ է: Մարդու ճանաչող բանականությունը, սակայն, ընդունակ է ճանաչել արարված աշխարհը: Բանն այն է, որ միջնադարյան մտածողության սահմաններում «աստվածային էություն» հասկացությունը համահարաբերական էր «աստվածային ճշմարտություն» հասկացությանը: Հետևաբար, ճանաչել աստվածային էությունը նշանակում էր բացահայտել աստվածային ճշմարտությունը:

Հարկ է նշել, որ Անանիա Շիրակացու այս դիրքորոշումը ներդաշնակում էր արևելաքրիստոնեական եկեղեցու մեծ հայրերի աշխարհայեցողությանը, որում փորձ է արվել վերահմաստավորել անտիկ գիտությունն ու փիլիսոփայությունը: Մյուս կողմից, նման մոտեցումը անհրաժեշտ է բնութագրել որպես աշխարհայացքային և մեթոդաբանական հիմք ազգային – մշակութային դաշտում «բնության փիլիսոփայություն» ստեղծելու համար: Եթե արարված աշխարհն ունի հարաբերականորեն ինքնուրույն գոյություն, ապա բնության մասին գիտությունը անհրաժեշտորեն ձեռք է բերում հարաբերականորեն ինքնուրույն կարգավիճակ:

Հիմնվելով անտիկ (Պլատոն, Արիստոտել) տիեզերաբանական ուսմունքների, Ս.Գրքի տեքստերի և դասական հայրաբանության և առաջին հերթին՝«կապադովկյան դպրոցի» կողմից մշակված գաղափա-

բադրությունների վրա, հայ մտածողը ստեղծում է աստվածակենտրոն տիեզերաբանական մի մոդել, որի նմանօրինակը արևմտաեվրոպական տիեզերաբանության մեջ առաջադրվեց միայն XIII-XIV դարերում: Խնդիրն այն է, որ անտիկ տիեզերաբանության առանցքը տիեզերքի կառուցվածքի ու նրա կառուցվածքային միավորների հիմնախնդիրն էր, որի նշանակությունը պահպանվեց նաև քրիստոնեության մեջ:

Ընդհանուր կառուցվածքի առումով տիեզերքը Անանիա Շիրակացու հայեցակարգում բաղկացած է Մեծ՝ հոգևոր և Փոքր՝ ֆիզիկական տիեզերքներից: Իբրև ինքնուրույն կառուցվածքային մարմին դրանց միջև առկա է «վերին երկինքը», որը հավասարապես պատկանում է ինչպես Մեծ, այնպես էլ Փոքր տիեզերքներին: Եռաստիճան այս տիեզերքի երկրորդ աստիճանը Անանիա Շիրակացու դատողություններում աշխարհայացքային կարևոր նշանակություն ունեցող աստիճան է: Սահմանելով ֆիզիկական տիեզերքի տարածությունը՝ Անանիա Շիրակացին այն դուրս է բերում բուն ֆիզիկական տարածությունից և իր գոյությամբ պայմանավորում ֆիզիկական տարածությունն ու ֆիզիկական ժամանակը, ինչպես նաև ֆիզիկական տիեզերքի սահմաններում տեղի ունեցող գործընթացները: Միաժամանակ արարված լինելով հավիտենության մեջ՝ այն ամբողջապես չի պատկանում նաև Մեծ տիեզերքին, հավիտենությանը, այլ համարվում է «առանձնակի մարմին»[4]:

Հետևելով անտիկ շրջանում ձևավորված ավանդույթին՝ բուն ֆիզիկական տիեզերքի կառուցվածքը Անանիա Շիրակացին բնութագրում է տարրաբանական պատկերի միջոցով: Ըստ դրա՝ տիեզերքը բաղկացած է մեկ տարրից: Շիրակացին առանձնացնում է չորս կառուցվածքային մասեր (հրային, օդային, ջրային և հողային), որոնք համապատասխանում են բնության չորս տարրերին:

Անանիա Շիրակացու աշխարհի «բնաբանական պատկերը» հիմնված է տարրերի մասին անտիկ բնափիլիսոփայական մտքի վրա:

Աշխարհի ստեղծումը, Տիեզերքի առաջացման ընթացքը Շիրակացին սահմանում է իբրև հարաբերականորեն ինքնուրույն և «բնական» գործողություն: Արարչագործությունից հետո նյութական աշխարհում նկատելի է իրերի և երևույթների անվերջ գոյացում և ոչնչացում, ինչը բնական համակարգի գոյության և պահպանման կարևորագույն օրենքն է: Փաստորեն հայ իրականության մեջ Շիրակացին առաջին հայ

մտածողն էր, որը շարադրեց և մեկնաբանեց արիստոտելյան ուսմունքը չորս տարրերի մասին:

Շիրակացու տեսական ժառանգությունը, որը բովանդակում է իր ժամանակի մաթեմատիկական և բնագիտական գիտելիքի գրեթե բոլոր բնագավառները (տիեզերագիտություն, թվաբանություն, աստղաբաշխություն, երաժշտության տեսություն, չափագիտություն, աշխարհագրություն և այլն), սկսել են ուսումնասիրել դեռևս XIX դ. հայազգի և օտար հայագետները՝ Գ. Տեր-Մկրտչյանը, Ք. Պատկանյանը, Ղ. Ալիշանը, Ֆ. Քոնիբերը, Հանս Մժիկը և այլոք: Շիրակացու ժառանգությունը հետաքրքրել է նաև Հ. Օրբելուն: Փիլիսոփայապատմական և գիտապատմական տեսակետից Անանիայի աշխատությունները ուսումնասիրվել են Հ. Գաբրիելյանի, Վ. Չալոյանի, Գ. Խրլոպյանի, Ս. Արևշատյանի և Կ. Միրումյանի կողմից: Անանիա Շիրակացու թողած ժառանգության նկատմամբ հետաքրքրությունը չի մարում նաև այսօր, քանզի այն ունի ոչ միայն պատմաճանաչողական մեծ արժեք, այլև արդիական հնչեղություն:

Դա պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ հայ հոգևոր մշակույթի պատմության մեջ Անանիա Շիրակացին մտել է նաև որպես հայ մեծ լուսավորիչ և մանկավարժ: Իր ժամանակի Հայաստանում նա հիմնել է բարձր տիպի դպրոց սեփական բազմատեսակ և հարուստ գիտելիքը հայորդիներին փոխանցելու նպատակով: Այդ դպրոցի ուսումնական ծրագրի հիմքը կազմում էին մաթեմատիկական և բնագիտական առարկաները («քառյակ գիտություններ»): Դպրոցի հիմնադրմամբ Շիրակացին ձգտում էր լրացնել ազգի մշակութային կյանքում առկա այս բացը: Դրա հետ մեկտեղ նա ստեղծում է իր ժամանակի գիտությունների դասակարգումը, որը միջնադարում կազմում էր բարձրագույն դպրոցի ուսումնական ծրագրի հիմքը:

Անանիա Շիրակացու կրթության փիլիսոփայության համար ելակետային է հետևյալ սկզբունքը՝ ամբողջ գոյի իմացությամբ զբաղվող տեսական փիլիսոփայությունը բաժանվում է բնագիտության (ֆիզիկայի), մաթեմատիկայի և մետաֆիզիկայի (աստվածաբանության):

Հիմնվելով Դավիթ Անհաղթի մեթոդաբանության և գիտությունների դասակարգման վրա, Շիրակացին ստեղծում է բնագիտության իր դասակարգումը, որը բովանդակում է մի շարք բնագիտական առարկաներ՝ տեսական բնագիտությունը, ընդ-

հանուր դասընթաց ներկայացնող տիեզերագիտությունը, տեսական և նկարագրական աշխարհագրությունը, գիտական և ժողովրդական օդերևութաբանությունը, տարրաբանությունը (տարրական, ֆիզիկական և տիեզերաբանական առումներով):

Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ մինչև VII դ. հայերը օգտագործում էին շարժական տոմարը, ինչը դժվարություններ էր առաջացնում եկեղեցական տոների համակարգում: Ներսես Մեծի հաջորդի՝ Անաստաս կաթողիկոսի հանձնարարությամբ Շիրակացին ստեղծում է հայկական տոմարի հաստատուն կարգը, «զի միշտ անշարժք լինիցին տօնք տարեկանաց կամ յեղափոխ յեղանակք ժամանակաց»[5]: Դրա հետ մեկտեղ նա համապատասխանեցնում է 15 ժողովուրդների տոմարները՝ 532-ամյա շրջանի համար և կազմում զուգահեռ հուլիական և հայկական տոմարներ:

Հայկական տոմարի ստեղծման անհրաժեշտության գիտակցումն ու մանավանդ դրա «ստեղծագործումը» վկայում է վաղ միջնադարյան Հայաստանի քաղաքակրթական բարձր մակարդակի մասին և միաժամանակ արտացոլում հայ միջնադարյան մշակույթի առանձնահատկությունն ու առաջին հերթին՝ հայերի վերաբերմունքը ժամանակի նկատմամբ: Անանիա Շիրակացու ստեղծած տոմարի մեջ սահմանված ժամանակի չափորոշիչը այդ ժամանակաշրջանի հայ ազգային մշակույթի մեջ իրականացվող բոլոր շարժընթացների ցուցանիշն է: Խնդիրն այն է, որ որոշակի մշակույթի տարածության մեջ վերաբերմունքը ժամանակի նկատմամբ արտահայտվում է նախ և առաջ տոմարի մեջ: Տոմարը, ըստ էության, այն ռիթմն է, որը արտաքին Տիեզերքը ներդաշնակորեն միավորում է մարդու (ազգի) ներքին, այն է՝ հոգևոր Տիեզերքի հետ: Անանիայի անշարժական տոմարի մեջ ժամանակին տրված էր որոշակի ռիթմ՝ պայմանավորված հայ եկեղեցական տոներով և բնական բոլորաշրջաններով («ժամանակի հարափոփոխ եղանակները»): Բացի այս, տոմարը, ըստ էության, ոչ միայն ռիթմն է, այլև հիշողությունը, այն է՝ ազգի ռիթմիկ հիշողությունը: Իսկ 532-ամյա շրջանի համար 15 ժողովուրդների տոմարների համապատասխանեցման Շիրակացու կատարած մեծ աշխատանքը հարկ է համարել «մարդկության ռիթմիկ հիշողության» պահպանման վիթխարի մի փորձ:

Անանիա Շիրակացու գրչին է պատկանում նաև հռչակավոր տոմարագետ Անդրեաս Բյուզանդացու (IVդ.) տոմարի մեկնությունը, որը բո-

վանդակում է նաև բազմաթիվ տեղեկություններ հայկական օրացույցի մասին: Շիրակացու այս աշխատությունը արժեվորելու համար հարկ է հաշվի առնել այն հանգամանքը, որ Անդրեաս Բյուզանդացու բնագիրը չի պահպանվել:

Ուշագրավ է նաև Շիրակացու բառակազմական և տերմինաշինական գործունեությունը և հատկապես աստղագիտական հասկացությունների մեկնաբանությունն ու ճշգրտումը:

VII դարում Հայ եկեղեցու, հետևապես՝ նաև հայ ազգի համար հրատապ էր քաղկեդոնականության և հակաքաղկեդոնականության «երկխոսությունը»:

Ինչպես հայտնի է, քաղկեդոնականությունը Բյուզանդիայի պետական գաղափարաբանությունն էր, այդ կայսրության աշխարհակալ քաղաքականության կրոնական հզոր կառուցակարգը: Շիրակացին համոզված էր, որ բյուզանդական կայսրության կողմից «երկաբնակության» բանաձևի ընդունումը պայմանավորված էր կայսրության քաղաքական շահերով: Ելնելով դրանից, նա համեմատում է հայոց և հունաց եկեղեցիների դավանաբանական կողմնորոշումները և հաստատում է այն փաստը, որ հայերը Նիկիայի ժողովում ներկա գտնվող եկեղեցու սուրբ հայրերի հետևորդներն են: Մինչդեռ հույները չեն հետևում ճշմարտությանը, այլ միշտ ձգտում են «իշխանության, բռնության և ճարտարության»: «Հայ եկեղեցու հակաքաղկեդոնակությունը» հայ ժողովրդի հոգևոր և դրանով պայմանավորված՝ քաղաքական անկախության ձգտման վառ արտահայտությունն էր:

Շիրակացու աշխարհայացքային և տեսական՝ մեթոդաբանական կարևորագույն սկզբունքները բովանդակում է «Տիեզերագիտություն» անվան տակ հայտնի նրա հիմնական երկասիրությունը: Նրա գրչին է պատկանում նաև «Աշխարհացույց» աշխատությունը, որը իրավամբ համարվում է համաշխարհային աշխարհագրական և քարտեզագրական ժառանգության հայտնի հուշարձան, որում ուսումնասիրվում էր գնդաձև երկիր մոլորակը՝ տիեզերակարգի հիմնական միավորումներից մեկը: Անանիա Շիրակացին նաև հնագույն մաթեմատիկական մշակույթի վառ ներկայացուցիչն է, ինչի մասին վկայում է մաթեմատիկական մտքի հայտնի պատմաբան Ի. Դեպմանը. «Մաթեմատիկական մշակույթի հնության առումով Սովետական Միության ժողովուրդների մեջ առաջին տեղում են հայերը... (Շիրակացին.- Ռ.Մ.) իր աշխատություններում, բացի զուտ մաթեմատիկական խնդիրներից, արծարծում է

նաև այլ հարցեր՝ երկրի գնդածևության, Լուսնի և Արեգակի խավարումների, բազմանկյուն թվերի, օրացուցային հաշվումների, արեգակնային ժամացույցների մասին, և այդ ամենը նա արտահայտել է մի դարաշրջանում, երբ եվրոպական ժողովուրդների մոտ գրեթե ոչ ոք այդ հարցերի ուսումնասիրությամբ չեր զբաղվել»[6]: Անանիա Շիրակացու մաթեմատիկական հմտությունները դրսևորվել են նաև երաժշտական ակուստիկայի ոլորտում: Հետևելով Դավիթ Անհաղթին և նորապյութագորական Նիկոմաքոսին՝ նա ստեղծեց «տասնորդական աղյուսակի» հայկական տարբերակը, դրանով իսկ նպաստելով հայ երաժշտագիտության զարգացմանը:

Շիրակացու շնորհիվ ավարտվեց բնագիտության ձևավորումը հայ տեսական-փիլիսոփայական մտքի պատմության մեջ: Շիրակացու «բնաբանությունը» հիմք հանդիսացավ XI-XV դարերի բնագիտական մտքի համար: «Շիրակացու բնագիտական աշխարհայացքը հայ փիլիսոփայության մեջ բնագիտական մտքի գրեթե երեք հարյուրամյակների զարգացման, գաղափարների և սկզբունքների ժառանգորդման, ռացիոնալ գիտելիքների տարանջատման երկարատև գործընթացի տրամաբանական արդյունքն է, գործընթաց, որի շնորհիվ «բնաբանությունը» վերածեց հետազոտության հարաբերականորեն ինքնուրույն բնագավառի»[7]: Սինչդեռ նրա կրթության փիլիսոփայությունը կանխորոշեց միջնադարյան Հայաստանի բարձրագույն և հատկապես՝ բնագիտական-մաթեմատիկական կրթության հետագա զարգացումը:

Համաշխարհային գիտության պատմության ուսումնասիրողների արդարացի վկայությամբ Անանիա Շիրակացին շարունակում է այն գիծը, որը անտիկ բնագիտական մտքի զարգացման համատեքստում նշմարել են Բարսեղ Կեսարացին և Հովնան Փիլոպոնը (VI դար): Ընդսմին, Օ. Բորոդինի վկայությամբ, Շիրակացին շատ ավելի մոտ է կանգնած անտիկ գիտության ավանդույթներին, քան ժամանակաշրջանի այլ հեղինակներ[8]: Անանիա Շիրակացու բնագիտական աշխարհայացքը նշանավորել է գիտափիլիսոփայական մտքի ձևավորման կարևորագույն փուլը, արտահայտել միջնադարյան մտածողության առանձնահատուկ ոճը և կանխորոշել հայ գիտափիլիսոփայական մտքի զարգացման ուղին, ինչպես նաև Հայաստանում բնագիտական կրթության բնույթը: Շիրակացու աշխատությունները մեծ ազդեցություն են գործել բյուզանդական գիտնականներ Լևոն Մաթեմատիկոսի IX դ. և Նիկողայոս Արտավազդի XIV դ. վրա:

Ծանոթագրություններ՝

1. Ակնհայտ է այն իրողությունը, որ արդի մարդկության հոգեմտավոր կյանքի վրա բացառիկ ազդեցություն է գործում քաղաքակրթության խորացող ճգնաժամի գիտակցումը: Իր ծայրահեղ ձևերում արդի քաղաքակրթության և մշակույթի «post modern» - ական քննադատությունը ձեռք է բերել «հակափիլիսոփայական փիլիսոփայության» կարգավիճակ: Ուստի Արդիականության առաջնային խնդիրներից մեկն է հոգևոր արժեքների վերակենդանացումը, որոնք կնպաստեն «post modern» -ական ժխտողականության հաղթահարումը: Այս խնդիրը կարող է լուծվել փիլիսոփայության «ինքնաստեղծ» գործառույթի շեշտադրման միջոցով: Միաժամանակ ազգի և մարդկության մշակութային ժառանգության պահոցի դեր կատարող փիլիսոփայությունը, այն է՝ փիլիսոփայական մտքի պատմությունը, փոխակերպում է ազգի և մարդկության կեցության հոգևոր ոլորտը, դրանով իսկ խթանում պատմական զարգացումը: Փիլիսոփայությունը, այսպիսով, մարդկային համակեցության վայրենացման շարժընթացի հաղթահարման գլխավոր միջոցն է, ազգային մշակույթի բուն առանցքը: Այս կողմից, արդի աշխարհում պահանջված մարդկության միասնությունն ու բազմազանությունը ապահովվում է միայն քաղաքակրթությունների երկխոսության միջոցով: Քաղաքակրթությունների երկխոսության գաղափարը ուղղակիորեն հարաբերակցվում է համաշխարհականացման գաղափարի հետ, որն, իր հերթին, ենթադրում է մարդկության մշակութային բազմազանության պահպանումը: Այսպիսով, պատմության հրամայականն է այն ազգերի մշակույթների էթնոպաշտպանական գործառույթների ակտիվացումը, որոնց կենսագործունեության տարածությունը դեռևս վերջնականապես պատառոտված չէ համաշխարհականացման շարժընթացներով և արևմտյան (տեխնոգեն) քաղաքակրթության ակտիվ ներթափանցմամբ: Այդ ազգերի մշակութային հիշողությունը դեռևս կենդանի է և կարող է դառնալ ողջ մարդկության հիշողության վերակենդանացման հիմքը: Մշակութային հիշողության հատուկ կենսունակությամբ օժտված ազգերից է և հայ ազգը:

2. Տես Мирумян Римма. Армянское культурное наследие как механизм самозащиты нации в условиях глобализации (к вопросу о политической концепции культуры) //Армения в диалоге цивилизаций. Материалы

международной конференции. 28 апреля 2011г.- Нижний Новгород: Деком, 2011.-с. 83.
3. Միրումյան Կառլեն, Անանիա Շիրակացի («Իմաստասէրք հայոց» մատենաշարից), Երևան, Նոյյան Տապան, 1998, էջ 11-12:
4. Անանիա Շիրակացի, Տիեզերագրություն և տոմար/ Աշխար.՝ Ա.Գ. Աբրահամյանի, Երևան, 1940:
5. Յովհաննես Դրասխանակերտցի, Պատմություն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 92:
6. Депман И.Я. История арифметики. М., 1959. с. 18. Տես նաև՝ История отечественной математики, М., 1966, էջ 445:
7. Միրումյան Կ. Ա., Անանիա Շիրակացու բնափիլիսոփայությունը // Ս. Ս. Արևշատյան, Կ. Ա. Միրումյան, Հայոց փիլիսոփայության պատմություն. Հին շրջան և վաղ միջնադար, Երևան, 2007, էջ 398:
8. Տես Августин. Творения блаженного Августина՝ Ч.3.-Киев, 1906, с. 447.